KPMG

KPMG Tax Alert

May 2024

2022 թվականի մարտի 23-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց օրինագիծ (ՀՕ-86-Ն), որը էական փոփոխություններ մտցրեց Հարկային օրենսգրքում, մասնավորապես տրանսֆերային գնագոյացման կարգավորմանը վերաբերող դրույթներում: Օրենքով նախատեսված հիմնական փոփոխություններից է նախնական գնագոյացման համաձայնագրի (ՆԳՀ) գաղափարի ներդրումը:

Ի՞նչ է նախնական գնագոյացման պայմանավորվածությունը

Նախնական գնագոյացման համաձայնագիրը հարկային մարմնի և հարկ վճարողի միջև կնքվող պայմանագիր է, որով սահմանվում են վերահսկվող գործարքներում տրանսֆերային գնագոյացման մեթոդների կիրառման և այդ գործարքների մասով սահմանված ժամանակահատվածի համար ֆինանսական ցուցանիշները:

Որո՞նք են ՆԳՀ ձեռքբերման առավելությունները

- հարկ վճարողի վերահսկվող գործարքների նկատմամբ հարկային հստակությունը
- հավանական հարկային վեճերի առաջացման ռիսկի կրճատումը
- ՆԳՀ-ն երկարաձգելու հնարավորությունը, եթե վերահսկվող գործարքի պայմաններում փոփոխություններ չեն եղել

Ո՞վ կարող է դիմել

Կարող են դիմել ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունները, որոնք իրականացրել են վերահսկվող գործարքներ ոչ ռեզիդենտ գործընկերների հետ:

Ե՞րբ հարկատուները կարող են դիմել ՆԳՀ-ի համար

ՆԳՀ գաղափարը ՀՀ-ում ներդրվել է 2024 թվականի հունվարի 1-ից սկսած, հետևաբար, հարկ վճարողները կարող են հունվարի 1- ից դիմել ՆԳՀ ձեռք բերելու համար:

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ հարկային մարմնի հետ ՆԳՀ վերաբերյալ բանակցություններ կազմակերպելու համար

- վերահսկվող գործարքի կողմերի մասին տեղեկատվություն
- գործարքի մանրամասները
- ՆԳՀ ձեռք բերելու առաջարկվող ժամանակահատվածը
- ընտրված տրանսֆերային գնագոյացման մեթոդը

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Հարկային մարմնի կողմից հաստատում ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում հարկ վճարողը օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին պետք է ներկայացնի էլեկտրոնային դիմում: Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝

- ՆԳՀ նախագիծը
- Կազմակերպության կանոնադրության պատճենը,
- հաշվետու ժամանակաշրջանի համար ֆինանսական հաշվետվությունը
- վերահսկվող գործարքին վերաբերվող փաստաթղթերը

Ինչպիսի՞ն է ՆԳՀ կնքելու ընթացակարգը

Ստացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկային մարմինը 45 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում և 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է հարկ վճարողին դրա մասին: Հնարավոր որոշումներն են՝

- կնքել ՆԳՀ
- չկնքել ՆԳՀ
- առաջարկել փոփոխություններ ՆԳՀ նախագծում

Որքա՞ն է ՆԳՀ վավերականությունը

ՆԳՀ կարող է կնքվել առավելագույնը 3 տարի ժամկետով մեկ կամ մի քանի վերահսկվող գործարքի համար՝ և՝ 2 տարի երկարաձգելու հնարավորությամբ:

Կրում է արդյո՞ք կազմակերպությունը վերահսկվող գործարքների մասին ծանուցում ներկայացնելու պարտավորություն, եթե կնքված է ՆԳՀ

Այո, եթե նույնիսկ կա կնքված ՆԳՀ, հարկ վճարողները պարտավոր են ներկայացնել ծանուցում վերահսկվող գործարքների մասին:

Ինչպե՞ս կարող է KPMG-ն օգնել Ձեզ

- Ուղեկցել ՆԳՀ գործընթացում
- Պատրաստել ՏԳ փաստաթղթավորում
- Իրականացնել համադրելիության վերլուծություն

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ներսես Ներսիսյան
Գործընկեր, Հարկային ու իրավաբանական բաժնի ղեկավար

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
8-րդ հարկ, Վազգեն Սարգսյանի 26/1
Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն

T: + 374 (10) 595 999
M: +374 (55) 025 725

Ռաֆիկ խաչատրյան
Ավագ մենեջեր, Հարկային ու իրավաբանական ծառայություններ, Տրանսֆերային գնագոյացում

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
8-րդ հարկ, Վազգեն Սարգսյանի 26/1
Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն

T: +374 (10) 595 999
M: +374 (91) 55 90 20

kpmg.co.am

Սույն առաջարկը պատրաստվել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի կողմից, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն է և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին («KPMG International») անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ:

«KPMG International»-ը և վերջինիս կապակցված կազմակերպությունները չեն մատուցում ծառայություններ հաճախորդներին: Որևէ անդամ ընկերություն իրավասու չէ պարտադրել կամ պարտավորեցնել «KPMG International»-ին, վերջինիս կապակցված

կազմակերպություններից որևէ մեկին կամ ցանկացած այլ անդամ ընկերությանը հանձն առնել պարտականություններ երրորդ անձանց հանդեպ: «KPMG International»-ը կամ վերջինիս կապակցված կազմակերպություններն իրենց հերթին իրավասու չեն պարտադրել կամ պարտավորեցնել ցանկացած անդամ ընկերությանը հանձն առնել նման պարտականություններ:

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

The KPMG name and logo are trademarks used under license by the independent member firms of the KPMG global organization.

Document Classification: KPMG Confidential